# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 15.04.2022 թ. կնքած N ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան 03 նոյեմբերի 2022 թ.

Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Ալեքսանյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայանտառ» ՊՈԱԿ-ն, ի դեմս Ընկերության տնօրենի պաշտոնակատար Ս. Մարկոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից,, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ հոդվածով և 56-րդ կետով և հիմք ընդունելով 2022 թվականի ապրիլի 15-ին կնքած N ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 ծածկագրով «ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ» աշխատանքների գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5-րդ կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### *1. Համաձայնագրի առարկան*

Կողմերը որոշեցին

1.1 Պայմանագրի 4-րդ կետի 4.1 ենթակետում «413011700 (չորս հարյուր տասներեք միլիոն տասնմեկ հազար յոթ հարյուր)» թվերն ու բառերը փոխարինել «387174800 (երեք հարյուր ութսունյոթ միլիոն հարյուր յոթանասունչորս հազար ութ հարյուր)» թվերով և բառերով:

1.2 Հաստատել համաձայնագրի հավելված NN 1,2 և հավելված N1.1-ը

1.3 Ուժը կորցրած ճանաչել Պայմանագրի հավելված 1, 2 և հավելված N1.1-ը

### *Այլ պայմաններ*

1.4 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Կողմերի միջև կնքած N ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

1.5 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

1.6 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## *2 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| | |
|---|---|
| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
| **Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտե** | **«Հայանտառ» ՊՈԱԿ** |
| ք.Երևան, Ա. Արմենակյան 129 | ք.Երևան, Ա. Արմենակյան 129 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն |
| ՀՀ 900011023265 | ՀՀ 900018002270 |
| ՀՎՀՀ 00476409 | ՀՎՀՀ 02512343 |
| Անտառային կոմիտեի գլխավոր քարտուղար | «Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար |
| ***Լ. Ալեքսանյան*** | **Ս. Մարկոսյան** |
| ---------- | ---------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |